

**ՀԱՅԵՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ԿԵՐՊԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ  
ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՑՈՒՆԻՑ**

**ՍԱՐԳԻՍ ԱՎԵՏՅԱՆ**

Ժամանակի և կերպի քերականական կարգերը արդի հայերենի առանցքային, բայց միևնույն ժամանակ հայերենագիտության մեջ բազմիցս տարակարծությունների տեղիք տված և մինչև օրս վերջնական լուծում չստացած հարցերից են: Մույն հոդվածում փորձ է արվում հայերենի ժամանակի և կերպի քերականական կարգերը դիտարկել ընդհանուր լեզվաբանության և լեզվաբանական տիպաբանության տեսանկյունից: Մասնավորապես քննության են ենթարկվում հետևյալ կնճռոտ հարցերը. ա) հայերենի սահմանական եղանակի ժամանակաձևերի քանակի և, այդ համատեքստում, *հարակատար դերբայ+եմ/էի օժանդակ բայ* կապակցությունների պա՞րզ, թե՞ բաղադրյալ ստորոգյալ լինելու հարցը, բ) գլխավոր վերլուծական ժամանակաձևեր կազմող դերբայների արտահայտած քերականական իմաստի բնույթը, գ) ոչ իրադրական ժամանակի և իրադրական ժամանակի տարբերակման և *ներկա, նախաներկա, ապաներկա, անցյալ, նախանցյալ, ապանցյալ* անվանումների նպատակահարմարության հարցը, դ) հայերենում կերպի քերականական կարգի, կերպերի քանակի և բնույթի հարցերը:

Հայ քերականագիտության մեջ արդի հայերենի համար սովորաբար տարբերակում են սահմանական եղանակի յոթ կամ ինը գլխավոր ժամանակային ձևեր՝ նայած այն բանին, թե հարակատար դերբայի և *եմ/էի* օժանդակ բայի կապակցությունները դիտվում են որպես եղանակային ձևե՞ր, թե՞ բաղադրյալ ստորոգյալ<sup>1</sup>: Իհարկե, այն լեզվաբանները, որոնք հարակատար դերբայի և *եմ/էի* օժանդակ բայի կապակցությունները դիտում են որպես եղանակային ձևեր, այսինքն՝ որպես *հարակատար ներկա* և *հարակատար անցյալ* ժամանակաձևեր, միևնույն ժամանակ նշում են, որ հարակատար ժամանակաձևերը կազմվում են ոչ բոլոր բայերից, այլ միայն կրավորական սեռի և դրություն, վիճակ

<sup>1</sup> Տե՛ս **Հ. Բարսեղյան**, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Եր., 1953, էջ 180–199, **Է. Աղայան**, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 369, **Ս. Գ. Աբրահամյան**, **Ն. Ա. Պառնասյան**, **Հ. Ա. Օհանյան**, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Ձևաբանություն, Եր., 1974, էջ 359–374, **Ս. Աբրահամյան**, Ժամանակակից գրական հայերեն, Եր., 1981, էջ 208–210, **Մ. Ասատրյան**, Ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանություն, Եր., 1983, էջ 309–321:

ցույց տվող մի շարք չեզոք սեռի բայերից<sup>2</sup>: Այլ կերպ ասած՝ հարակատար ձևեր կարող են կազմել միայն այն բայերը, «որոնք իրենց գործողության հետևանքով որոշակի (**քնել-քնած, ընկնել-ընկած, զարգանալ-զարգացած, կայչել-կպած**) դրություն, վիճակ կարող են ստեղծել ենթակայի համար»<sup>3</sup>:

Թեև Մ. Ասատրյանը այդ հարցի նկատմամբ ունի երկվական վերաբերմունք, այդուհանդերձ ավելի ճիշտ է համարում *հարակատար դերբայ + եմ/էի* կապակցությունները հանել խոնարհման համակարգից<sup>4</sup>: Իսկ Է. Աղայանը *հարակատար դերբայ + եմ/էի* կապակցությունների՝ եղանակային ձև լինելու դեմ բերում է մի շարք փաստարկներ, որոնցից ամենագորեղը, մեր կարծիքով, հետևյալն է. «Բայի բաղադրյալ եղանակային ձևերում, որոնք կազմվում են որևէ դերբայի և օժանդակ բայի հարադրությամբ, ժխտական խոնարհման դեպքում օժանդակ բայը դրվում է դերբայից առաջ, ինչպես՝ *չեմ քնում, չէի քնում, չեմ քնել, չէի քնել, չեմ քնելու, չէի քնելու, չեմ քնի, չէի քնի*»<sup>5</sup>: Մինչդեռ *հարակատար դերբայ + եմ/էի* կապակցությունների ժխտական խոնարհման ձևերում օժանդակ բայը հետադաս է, ինչպես բոլոր բաղադրյալ ստորոգյալների պարագայում (հմմտ. *քնած չեմ, քնած չէի* և *հիվանդ չեմ, հիվանդ չէի*): Ըստ այդմ՝ Է. Աղայանը գտնում է, որ «մեր լեզվի արդի կառուցվածքում հարակատար դերբայով եղանակային (գլխավոր) բաղադրյալ ձևեր չեն կազմվում, այն, ինչ որ համարվում է սահմանականի հարակատար ներկա և հարակատար անցյալ, պետք է համարել բաղադրյալ ստորոգյալ և հանել խոնարհման հարացույցից»<sup>6</sup>: Նշենք, որ մեր մի հոդվածում<sup>7</sup> մենք լիովին ընդունել ենք Է. Աղայանի սույն տեսակետը, սակայն այժմ հակված ենք վերանայելու այն:

Ինչպես վերը տեսանք, հարակատար ձևեր կազմելու համար կարևոր նախապայման է համարվում այն, որ տվյալ բայը իր գործողության հետևանքով որոշակի դրություն, վիճակ կարող է ստեղծել ենթակայի համար: Ըստ այդմ՝ թե՛ կրավորական սեռի բայերի և թե՛ չեզոք սեռի որոշ բայերի *հարակատար դերբայ + եմ/էի* կապակցությունները հավասարապես դիտվում են որպես *հարակատար ներկա* և *հարակատար անցյալ* ժամանակաձևեր<sup>8</sup>. հմմտ. *գրված է, կանգնած է, նստած է, հոգնած է, զարմացած է* և այլն: Գ. Ջահուկյանը նույնպես *հարակատար*

<sup>2</sup> Տե՛ս Մ. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնայան, Հ. Ա. Օհանյան, նշվ. աշխ., էջ 350-351, Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 180-199, Մ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 210:

<sup>3</sup> Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 190:

<sup>4</sup> Տե՛ս Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 254-264:

<sup>5</sup> Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 349:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 354:

<sup>7</sup> Տե՛ս Մ. Ավետյան, Անգլերենի ժամանակային հարաբերակցության կարգի և հայերենի ոչ իրադրական ժամանակի (ենթա-)կարգի զուգադրական քննություն, «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», Եր., 2015, 1(16), էջ 38-51:

<sup>8</sup> Տե՛ս Մ. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնայան, Հ. Ա. Օհանյան, նշվ. աշխ., էջ 350-351, Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 180-199, Մ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 210:

դերբայ + եւ/էի բոլոր կապակցությունները ներառում է բայի խոնարհման համակարգի մեջ, թեև կերպիմաստային տեսանկյունից տարբերակում է բայերի երկու խումբ՝ գուգահեռ անցկացնելով հարակատար և անկատար ձևերի միջև. «...վ չստացող և ինքնին վիճակ արտահայտող մի շարք (սահմանափակ թվով) բայերի դեպքում **ոււմ**-ով ձևերն արտահայտում են վիճակային անցում կամ տվյալ վիճակի սկիզբը, **ած**-ով ձևերը՝ տվյալ վիճակը. այլ կերպ ասած՝ **ոււմ**-ով ձևերը հանդես են գալիս որպես յուրատեսակ սկսական կերպի արտահայտություններ՝ ի տարբերություն այս դեպքում բուն անկատարը ներկայացնող **ած**-ով ձևերի. հմմտ. **կանգնում եմ, նստում եմ, պառկում եմ, քնում եմ և կանգնած եմ, նստած եմ, պառկած եմ, քնած եմ**, 2) վ-ով ուղեկցվող անցողական և ինքնին գործողություն արտահայտող բայերի դեպքում **ոււմ**-ով ձևերը ցույց են տալիս տվյալ գործողությունը որպես անկատար, իսկ **ած**-ով ձևերը՝ նախկինում կատարված գործողության հետևանքը որպես վիճակ... հմմտ. **գրվում եմ և գրված եմ**»<sup>9</sup>: Սակայն Գ. Ջահուկյանը տվյալ դեպքում չի անդրադառնում *հոգնում եմ-հոգնած եմ, բարկանում եմ-բարկացած եմ, զարմանում եմ-զարմացած եմ* տիպի անկատար և հարակատար ձևեր կազմող անանցողական բայերին, որոնք նույնպես վձանց չեն ստանում: Իսկ Մ. Ասատրյանը *հարակատար դերբայ + օժանդակ բայ* կապակցությունների դեպքում բայերի երկու խումբ է տարբերակում ոչ թե կերպային, այլ ժամանակային իմաստի տեսանկյունից: Ըստ նրա՝ *հարակատար դերբայ + եւ* կառուցվածքների ներկայի կամ անցյալի ժամանակային պատկանելությունը պայմանավորված է ընդհանուր բայական իմաստով. օրինակ, *քրտնած է, կանգնած է, բարկացած է, նստած է, հոգնած է, սիրահարված է* ձևերը ակնհայտորեն ներկա ժամանակ են ցույց տալիս, մինչդեռ *ավարտված է, կառուցված է* ձևերը՝ անցյալ ժամանակ<sup>10</sup>:

Այսպիսով, անկախ այն բանից, արդյոք *հարակատար դերբայ + եւ/էի* կապակցությունների դեպքում բայերը կերպային կամ ժամանակային իմաստի տեսանկյունից բաժանվում են տարբեր խմբերի, թե՞ ոչ, հատկանշական է, որ հետազոտողները *հարակատար դերբայ + եւ/էի* կապակցությունները պարզ կամ բաղադրյալ ստորոգյալ համարելու հարցում բայախմբերի տարբերակում չեն կատարում. *հարակատար դերբայ + եւ/էի օժանդակ բայ* բոլոր կապակցությունները հավասարապես դիտվում են կամ որպես եղանակաժամանակային ձևեր՝ պարզ ստորոգյալներ, կամ էլ որպես բաղադրյալ ստորոգյալներ: Սակայն, մեր կարծիքով, *հարակատար դերբայ + եւ/էի* կապակցությունները պարզ ստորոգյալներ են ներկայացնում դիրք, դրություն արտահայտող միայն սահմանափակ թվով բայերի դեպքում՝ *կանգնած է, նստած է,*

<sup>9</sup> Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 287:

<sup>10</sup> Տե՛ս Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. Բ., Եր., 1973, էջ 362-364:

պատկած է, քնած է, հենված է, իսկ մնացած դեպքերում բաղադրյալ ստորոգյալներ են՝ *բարկացած է, զարմացած է, հոգնած է, ավարտված է, կառուցված է* և այլն: Բանն այն է, որ *կանգնած է, նստած է, պատկած է, քնած է* կապակցությունները, ի տարբերություն *բարկացած է, զարմացած է, հոգնած է, ավարտված է* կապակցությունների, ունեն մի շատ կարևոր առանձնահատկություն, որը մինչև օրս հետազոտողների կողմից ուշադրության չի արժանացել. այդ կապակցությունները զբաղմունքային վիճակի իմաստ են արտահայտում և, ըստ այդմ, ենթակային վերագրվող բնութագրական վիճակը նպատակադիր բնույթ ունի, մինչդեռ մյուս օրինակները ենթակայի համար սոսկ բնութագրական վիճակի գաղափար են արտահայտում, որի դեպքում բացակայում է զբաղմունքային վիճակի իմաստը: Այլ կերպ ասած՝ առաջին դեպքում ենթակային վերագրվող բնութագրական վիճակը միաժամանակ ենթադրում է նպատակադիր զբաղմունքային վիճակի իմաստ, իսկ երկրորդ դեպքում ենթակային վերագրվող ֆիզիկական կամ հոգեկան բնութագրական վիճակը նպատակադիր բնույթ չունի և կարող է առաջանալ ենթակայի կամքից միանգամայն անկախ: Ըստ այդմ՝ կարծում ենք՝ *Օերունին հենված է գավազանին, Նա կանգնած է, Նա նստած է, Աղջիկը պատկած է* նախադասությունների մեջ *հարակատար դերբայ + օժանդակ բայ* կապակցությունները պարզ ստորոգյալներ են (և կարող են ընդունել *Նա ի նչ է անում* հարց), մինչդեռ *Նա հոգնած է, Նա հուզված է, Նա սպանված է, Նա հոշոտված է, Նա խմած է, Նա ապշած է* նախադասությունների *հարակատար դերբայ + օժանդակ բայ* կապակցությունները բաղադրյալ ստորոգյալներ են (և չեն կարող ընդունել *Նա ի նչ է անում* հարց, այլ միայն *Նա ինչպե՞ս է* հարց): Իսկ թե ինչու նպատակադիր զբաղմունքային վիճակ արտահայտող պարզ ստորոգյալները ժխտական ձևերում ձևաբանորեն չեն հետևում պարզ ստորոգյալների ընդհանուր սկզբունքին, կարծում ենք, դա կարող է պայմանավորված լինել հետևյալ հանգամանքով: Հարակատար դերբայը զբաղմունքային վիճակի իմաստով պարզ ստորոգյալ է կազմում չեզոք սեռի սակավաթիվ բայերի դեպքում: Մինչդեռ կրավորական սեռի բոլոր բայերի և չեզոք սեռի բայերի մեծ մասի հարակատար դերբայը սոսկ բնութագրական վիճակ է արտահայտում և բաղադրյալ ստորոգյալ է կազմում: Ուստի շատ հնարավոր է, որ սոսկ բնութագրական վիճակ արտահայտող բայերի ազդեցությամբ էլ հենց զբաղմունքային վիճակ արտահայտող սակավաթիվ բայերի հարակատար դերբայը ժխտականի կազմության հարցում համաբանությամբ ձևաբանորեն հետևում է բաղադրյալ ստորոգյալների սկզբունքին:

Այսպիսով, մենք հակված ենք կարծելու, որ հարակատար դերբայը հայերենում դիրք և դրություն արտահայտող չեզոք սեռի միայն սակավաթիվ բայերի (*նստել, կանգնել, պատկել* և այլն) դեպքում է կազմում պարզ ստորոգյալ, իսկ ընդհանուր առմամբ այլ բայերի դեպքում՝ բա-

դադրյալ ստորոցյալ: Ընդ որում՝ ավելի ճիշտ կլինի հարակատար դերբայով կազմված այդ պարզ ստորոցյալները անվանել ոչ թե *հարակատար ներկա* և *հարակատար անցյալ*, այլ *վիճակային ներկա* և *վիճակային անցյալ անկատար*, քանի որ այս դեպքում իրականում ընդգծվում է ոչ թե կատարված-ավարտված գործողության հետևանքայնության իմաստը, այլ համապատասխան ժամանակային կտրվածքում տվյալ վիճակի առկայության փաստը. վիճակային ներկան ցույց է տալիս վիճակ ներկայում, իսկ վիճակային անցյալ անկատարը՝ վիճակ անցյալում (մտտավորապես այնպես, ինչպես *գիտի/գիտեր* վիճակային բայի դեպքում): Ի դեպ, այլ լեզուներում նույնպես դիրք և դրություն արտահայտող այդ մի խումբ բայերը (verbs of posture and location) սովորաբար անկատար կերպի եղանակային երկու ձև են կազմում, որոնցից մեկը ցույց է տալիս վիճակային անցում, այսինքն՝ դինամիկ գործողություն, մյուսը՝ վիճակ (դիրք, դրություն)<sup>11</sup>. հմմտ. անգլ. *He is sitting down*, ռուս. *сидится* - նստում է և անգլ. *He is sitting*, ռուս. *сидит* - նստած է և այլն:

Մնացած յոթ ժամանակաձևերից անցյալ կատարյալը տարակարծությունների տեղիք չի տալիս: Ինչ վերաբերում է *անկատար/վաղակատար/ապառնի դերբայ + եմ/էի* կապակցություններին, դրանց եղանակային ձևեր լինելը կասկած չի հարուցում, սակայն դերբայի և օժանդակ բայի քերականական-իմաստային փոխհարաբերությունը հայ քերականագիտության մեջ մեկնաբանվում է ոչ միանշանակ:

Մ. Աբեղյանը արդի հայերենի վերլուծական ժամանակաձևեր կազմող դերբայներին վերագրում է կատարվող, կատարված և կատարելի կերպային իմաստներ և գտնում է, որ գործողության կատարման ժամանակն արտահայտվում է օժանդակ բայի, իսկ ընթացքային վիճակը (կերպը)՝ դերբայների միջոցով: Ուստի Մ. Աբեղյանը *եմ* օժանդակ բայով և դերբայներով կազմված բոլոր բայաձևերը դիտում է որպես ներկա ժամանակի, իսկ *էի* օժանդակ բայով և դերբայներով կազմվածները՝ անցյալ ժամանակի բայաձևեր: Հետևաբար ժամանակ ասելով Մ. Աբեղյանը նկատի ունի այն ժամանակակետը, որի հարաբերությամբ վերցվում է գործողությունը: Ըստ այդմ՝ *գնում է, գնացել է, գնալու է* բայաձևերը նույնն են ժամանակով (ներկա) և իրարից տարբերվում են միայն կերպով՝ *գնում է* (կատարվող կերպ), *գնացել է* (կատարված կերպ), *գնալու է* (կատարելի կերպ)<sup>12</sup>:

Մեր հետագա քերականները դերբայներով և *եմ/էի* օժանդակ բայով կազմված բաղադրյալ եղանակային ձևերում Մ. Աբեղյանի հետևողությամբ տարբերակում են կատարվող, կատարված և կատարելի կերպեր<sup>13</sup>: Բայց եթե Մ. Աբեղյանը կերպային իմաստը վերագրում

<sup>11</sup> Տե՛ս C. S. Smith, *The Parameter of Aspect*, 2nd edition, Dordrecht, 1997, էջ 33:

<sup>12</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հ. 2, Եր., 1974, էջ 270–271, 458–461:

<sup>13</sup> Տե՛ս Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 151–152, Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 369, Մ. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պարոնասյան, Հ. Ա. Օհանյան, նշվ. աշխ., էջ 352–353, Մ. Ասատրյան, ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանություն, էջ 303–304:

եր միայն դերբայներին, հետագայում գործողության կերպ ասելով սովորաբար հասկանում են դերբայների արտահայտած գործողության ընթացքային վիճակի հարաբերումը (օժանդակ բայի միջոցով) որևէ ժամանակակետի հետ<sup>14</sup>: Այսպես, Ս. Աբրահամյանը, Ն. Պառնասյանը, Հ. Օհանյանը գրում են. «Բայի դերբայական ձևերում դրսևորված գործողության ընթացքը պայմանականորեն կոչվում է գործողության ընթացքային կամ կերպային վիճակ, իսկ այդ կերպային կամ ընթացքային վիճակի հարաբերումը որևէ ժամանակակետի հետ հայ քերականագիտության մեջ կոչվում է գործողության կերպ»<sup>15</sup>: Սակայն այդպիսի բնորոշմամբ գործողության կերպը և ժամանակը գրեթե նույնացվում են, եթե նկատի ունենանք, որ ժամանակ ասելով մեր քերականները հասկանում են տարբեր ընթացքային վիճակներ արտահայտող գործողությունների հարաբերումը (օժանդակ բայի միջոցով) ներկայի և անցյալի ժամանակակետերի հետ և ընդունում են, որ, ասենք, ներկա ժամանակակետի համեմատությամբ վերցված կատարվող, կատարված և կատարելի կերպային վիճակ արտահայտող դերբայները կազմում են տարբեր ժամանակներ՝ *ներկա, անցյալ, ապառնի*. հմմտ. *գնում է, գնացել է, գնալու է*<sup>16</sup>: Արդ, ստացվում է այնպես, որ ենթադրյալ «կերպային վիճակ» ցույց տվող դերբայները իրականում ժամանակային իմաստ են արտահայտում: Սակայն ինչպես հայտնի է, ժամանակը և կերպը, թեև միմյանց հետ սերտորեն կապված, երկու տարբեր քերականական կարգեր են և չեն կարող նույնացվել միմյանց<sup>17</sup>: Եթե ժամանակի քերականական կարգը ցույց է տալիս տվյալ իրադրության (եղելության) տեղաբաշխումը ժամանակի մեջ (the location of a situation in time), այսինքն՝ տվյալ իրադրության ժամանակային հարաբերումը որևէ ժամանակակետի (սովորաբար խոսելու պահի) հետ, ապա կերպի քերականական կարգը ցույց է տալիս տվյալ իրադրության ներքին ժամանակային կառուցվածքը (the internal temporal constituency / structure of a situation), այսինքն՝ արդյոք տվյալ իրադրությունը դիտվում է որպես մեկ անբաժանելի ամբողջություն, թե ուշադրություն է դարձվում նրա ներքին բաղկացուցիչ մասերի՝ սկզբի, միջին մասի կամ վերջի վրա և այլն<sup>18</sup>:

<sup>14</sup> Տե՛ս Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 150–151, Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնասյան, Հ. Ա. Օհանյան, նշվ. աշխ., էջ 351, Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանություն, էջ 304:

<sup>15</sup> Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնասյան, Հ. Ա. Օհանյան, նշվ. աշխ., էջ 351–352:

<sup>16</sup> Տե՛ս Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 144–146, Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնասյան, Հ. Ա. Օհանյան, նշվ. աշխ., էջ 348–349, 353:

<sup>17</sup> Տե՛ս B. Comrie, Aspect. An Introduction to the Study of Verbal Aspect and Related Problems, Cambridge University Press, 1976, էջ 2-5, B. Comrie, Tense, Cambridge University Press, 1985, էջ 6-7:

<sup>18</sup> Տե՛ս B. Comrie, Aspect, էջ 1-5, B. Comrie, Tense, էջ 6-14, նաև՝ D. N. S. Bhat, The Prominence of Tense, Aspect and Mood, Amsterdam-Philadelphia, 1999, էջ 13-15, 43-45:

Մյուս կողմից, քանի որ հայերենում, օրինակ, ներկա ժամանակակետի համեմատությամբ վերցված կատարվող, կատարված և կատարելի ենթադրյալ կերպային վիճակներ արտահայտող դերբայները իրականում միմյանց հակադրությամբ ոչ թե կերպային, այլ ժամանակային տարբերություն են արտահայտում՝ *ներկա, անցյալ, ապառնի* (հմմտ. *գնում է, գնացել է, գնալու է*), այսինքն՝ տվյալ դեպքում այս կամ այն իրադրությունը պարզապես հարաբերակցվում է խոսելու պահի հետ որպես նրան համընթաց, նախորդող կամ հաջորդող եղելություն, ուստի նրանք չեն կարող որպես կերպային հակադրության եզրեր դիտվել: Ինչպես ստորև կտեսնենք, արդի հայերենի սահմանական եղանակի գլխավոր ժամանակաձևերից անցյալ անկատարը և անցյալ կատարյալը կերպաժամանակային ձևեր են, քանի որ տարբեր ձևերի հետ կազմում են և՛ կերպային, և՛ ժամանակային առանձին հակադրություններ: Մինչդեռ մնացած ձևերը բուն ժամանակային ձևեր են, այլ ոչ թե կերպաժամանակային:

Գ. Ջահուկյանը դերբայների և *եւ/էի* օժանդակ բայի զուգորդությամբ կազմվող վերլուծական (բաղադրյալ) ժամանակային ձևերը դիտարկում է միանգամայն նոր մոտեցմամբ: Նա չի ընդունում կատարվող, կատարված և կատարելի կերպերի ավանդական տարբերակումը և գտնում է, որ համապատասխան դերբայները (որոնք նա անվանում է վերլուծական բայահիմքեր) արտահայտում են ոչ թե իսկական կերպային իմաստներ, այլ համընթացություն, նախորդում և հաջորդում: Այլ կերպ ասած՝ այս դեպքում մենք գործ ունենք «ժամանակի ոչ իրադրական (անորոշ) արտահայտության հետ. իրադրական ժամանակի դեպքում նշվում է հաղորդողի ընտրած համեմատության եզրը՝ խոսելու պահը կամ անցյալում ու ներկայում ընտրված որևէ պահ... Ոչ իրադրական ժամանակը ցույց է տալիս պարզապես ժամանակային հաջորդականություն՝ անկախ հաղորդողից...»<sup>19</sup>: Այսպիսով, Գ. Ջահուկյանը գտնում է, որ ժամանակի կարգն ունի երկու ենթակարգ՝ իրադրական ժամանակ և հաջորդականություն (ոչ իրադրական ժամանակ), թեև հնարավոր է համարում դրանք դիտել որպես առանձին կարգեր: Հաջորդականության տարբեր եզրեր (համընթացություն, նախորդում և հաջորդում) արտահայտող վերլուծական բայահիմքերը, զուգորդվելով ոչ անցյալ – անցյալ հակադրություն արտահայտող *եւ/էի* բայի ձևերի հետ, ցույց են տալիս բազմազան ժամանակահաջորդային հարաբերություններ<sup>20</sup>:

Այն հանգամանքը, որ Գ. Ջահուկյանը տարբեր ժամանակահաջորդային հարաբերություններ արտահայտող վերլուծական ժամանակային ձևերին անվանումներ տալիս ելակետ է ընդունում իրադրական

<sup>19</sup> Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969, էջ 268–270, Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, էջ 283–285:

<sup>20</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, էջ 283–285, 274:

ժամանակի երկու եզրերը՝ ներկա և անցյալ ժամանակակետերը (հմմտ. *ներկա, նախաներկա, ապաներկա և անցյալ, նախանցյալ, ապանցյալ* անվանումները)<sup>21</sup>, հայերենագիտության մեջ հաճախ տարակարծությունների տեղիք է տվել, և այնպիսի տպավորություն ստեղծվել, թե Գ. Ջահուկյանը ժամանակ ասելով Մ. Աբեղյանի նման նկատի ունի այն ժամանակակետը, որի հարաբերությամբ վերցվում է գործողությունը<sup>22</sup>: Նկատենք, սակայն, որ Գ. Ջահուկյանը *եմ/էի* օժանդակ բայի ձևերով արտահայտվող ներկա և անցյալ ժամանակակետերը դիտում է ոչ թե որպես իրադրական ժամանակներ, այլ որպես իրադրական ժամանակի եզրեր (հաղորդողի ընտրած համեմատության եզրեր)<sup>23</sup>: Արդ, այն հանգամանքից, որ, օրինակ, *ներկա, նախաներկա, ապաներկա* ժամանակաձևերի դեպքում հաղորդողի ընտրած համեմատության եզրը (իրադրական ժամանակի եզրը) նույն ներկա ժամանակակետն է (հմմտ. *գնում եմ* – ներկա, *գնացել եմ* – նախաներկա, *գնալու եմ* – ապաներկա), ինքնին չի հետևում, թե հաջորդականության երեք եզրերը (համընթացություն, նախորդում, հաջորդում) արտահայտող դերբայները ներկա ժամանակակետ արտահայտող *եմ* օժանդակ բայի զուգորդությամբ արտահայտում են մեկ իրադրական ժամանակ, այն է՝ իրադրական ներկա ժամանակը: Ընդհակառակը, մենք մի առիթով արդեն ցույց ենք տվել, որ Գ. Ջահուկյանը *ներկա, նախաներկա, ապաներկա* և *անցյալ, նախանցյալ, ապանցյալ* անվանումների տակ նկատի ունի ոչ թե երկու, այլ վեց առանձին ժամանակաձև, այսինքն՝ ճիշտ այնքան, որքան ընդհանուր առմամբ ընդունված է հայերենագիտության մեջ<sup>24</sup>: Բայց նա, ի տարբերություն ավանդական մոտեցման, միանգամայն իրավացիորեն գտնում է, որ դերբայների և *եմ/էի* օժանդակ բայի զուգորդությամբ կազմվող վերլուծական ժամանակային ձևերի դերբայները իրականում ոչ թե կերպային, այլ ժամանակային իմաստ են արտահայտում:

Այդուհանդերձ կարծում ենք՝ ժամանակի քերականական կարգի պարագայում ոչ իրադրական ժամանակի և իրադրական ժամանակի տարբերակումը որպես (ենթա-) կարգեր առարկություն է հարուցում և թյուրըմբռնման տեղիք է տալիս: Մասնավորապես ճիշտ չէր լինի իրադրական ժամանակը որպես ժամանակի կարգի ենթակարգ դիտել, քանի որ տվյալ դեպքում իրադրական ժամանակը ոչ այլ ինչ է, քան հենց նույն ժամանակի կարգը, եթե նկատի ունենանք, որ, ըստ Գ. Ջահուկյանի, իրադրական ժամանակի դեպքում նշվում է հաղորդողի

<sup>21</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 285, աղյուսակ 31:

<sup>22</sup> Տե՛ս, օրինակ, Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանություն, էջ 298–299:

<sup>23</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, էջ 285, աղյուսակ 31, Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, էջ 270, աղյուսակ 31:

<sup>24</sup> Հանգամանորեն տե՛ս Մ. Ավետյան, նշվ. աշխ., էջ 45–48:



ընտրած համեմատության եզրը՝ խոսելու պահը կամ անցյալում ու ներկայում ընտրված որևէ պահ, որի հարաբերությամբ վերցվում է տվյալ եղելությունը, և որ ժամանակի քերականական կարգը ցույց է տալիս ճիշտ նույն բանը, այսինքն՝ տվյալ իրադրության (եղելության) հարաբերումը որևէ ժամանակակետի (խոսելու պահի կամ անցյալում ու ներկայում ընտրված որևէ պահի) հետ<sup>25</sup>: Հետևաբար իրադրական ժամանակը ոչ թե ժամանակի ենթակարգ է, այլ հենց նույն ժամանակի կարգը: Իսկ դերբայներով արտահայտվող ոչ իրադրական ժամանակը (հաջորդականությունը) ժամանակի կարգի ներսում որպես ենթակարգ առանձնացնելու դեպքում հետևողականությունը պահանջում է որպես մյուս ենթակարգ դիտել ոչ թե իրադրական ժամանակը, այլ *եւ/էի* օժանդակ բայի միջոցով դրսևորվող ժամանակային հարաբերակցության կետը (the point of time reference), որի հարաբերությամբ վերցվում է (որին հարաբերվում է) տվյալ եղելությունը: Սակայն կարծում ենք՝ տեղին չէ ժամանակի քերականական կարգի ներսում առհասարակ այդպիսի ենթակարգային տարբերակում կատարել, քանի որ գլխավոր վերլուծական ժամանակաձևերի պարագայում անորոշ ժամանակային հաջորդականությունը (ոչ իրադրական ժամանակը) և ժամանակային հարաբերակցության կետը իրականում ոչ թե ենթակարգեր են, այլ ժամանակի կարգը ձևավորող անհրաժեշտ բաղադրիչներ: Հետևաբար ոչ իրադրական ժամանակը նաև չի կարող որպես ժամանակի կարգից անկախ, առանձին կարգ դիտվել, քանի որ ժամանակային հարաբերակցության կետ ցույց տվող *եւ/էի* օժանդակ բայի գույքորդությամբ այն ձևավորում է ժամանակի քերականական կարգը: Մյուս կողմից, կարծում ենք՝ նպատակահարմար չէ նաև թյուրըմբռնման տեղիք տվող *ներկա, նախաներկա, ապաներկա և անցյալ, նախանցյալ, ապանցյալ* անվանումների գործածությունը, քանի որ այնպիսի տպավորություն է ստեղծվում, թե գործ ունենք ոչ թե վեց առանձին ժամանակաձևերի, այլ երկու ժամանակաձևի (ներկայի և անցյալի) ենթատեսակների հետ: Ուստի ավելի ճիշտ կլիներ պահպանել այդ ժամանակաձևերի ավանդական անվանումները, մանավանդ որ Գ. Ջահուկյանը տվյալ դեպքում նկատի ունի ճիշտ նույնքան ժամանակաձևեր, որքան ավանդաբար ընդունված է հայերենագիտության մեջ:

Ինչ վերաբերում է կերպի քերականական կարգին, ժամանակակից հայերենի համար նշվում է երկու տիպի կերպային հակադրություն՝ անկատար – կատարյալ և մասնակի դրսևորում ունեցող (սահմանափակ բայեր ընդգրկող) միակատար – բազմակատար<sup>26</sup>: Սրանցից *անկատար – կատարյալ* կերպային հակադրությունը ժամանակակից հայերենում, ըստ էության, դրսևորվում է միայն *անցյալ անկատարի* և

<sup>25</sup> Տե՛ս **B. Comrie**, Tense, էջ 6-14:

<sup>26</sup> Տե՛ս **Գ. Ջահուկյան**, ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, էջ 252-253:

*անցյալ կատարյալի* հակադրության միջոցով<sup>27</sup>, իսկ այլ ձևերին, մասնավորապես բայարմատներին վերագրվող անկատար և կատարյալ կերպային իմաստները<sup>28</sup> իրականում նկատելի չեն կամ չեն զգացվում որպես այդպիսին: Այդ առումով արդի հայերենի անցյալ անկատարը և անցյալ կատարյալը կերպաժամանակային ձևեր են, քանի որ տարբեր ձևերի հետ կազմում են և՛ կերպային, և՛ ժամանակային առանձին հակադրություններ: Այսպես, եթե անցյալ անկատարի *գրում էր* բայաձևը անցյալ կատարյալի *գրեց* բայաձևի հետ կերպային (*անկատար կերպ – կատարյալ կերպ*) հակադրություն է կազմում, ապա ներկայի *գրում է* ձևին հակադրվում է ըստ ժամանակային իմաստի (*անցյալ ժամանակ – ներկա ժամանակ*): Ի դեպ, *անկատար – կատարյալ* (imperfective – perfective) կերպային հակադրությունը տիպաբանորեն լեզուներում հիմնականում հանդիպում է հենց անցյալի ժամանակային կտրվածքում, իսկ ապառնիի դեպքում այն ավելի հազվադեպ երևույթ է<sup>29</sup>: Ինչ վերաբերում է հայերենի միակատար (ոչ երկարատև) – բազմակատար (երկարատև) կերպային հակադրությանը (օրինակ՝ *ունեմ – ունենում եմ, գիտեմ – գիտենում եմ, եմ – լինում եմ*), այն, ըստ Գ. Ջահուկյանի, եղելության քանակական արտահայտությունն է, այսինքն՝ եղելության մեկ թե մեկից ավելի անգամ կատարվելու ձևաբանական արտահայտությունը<sup>30</sup>: Մակայն, մեր կարծիքով, *միակատար – բազմակատար* անվանումները չեն համապատասխանում հայերենում տվյալ ձևերի միջոցով դրսևորվող կերպային հակադրության բուն էությանը և թյուրըմբռնման տեղիք են տալիս: Բանն այն է, որ ընդհանուր լեզվաբանության և լեզվաբանական տիպաբանության տեսանկյունից *միակատար* (semelfactive/momentary, ռուս. однократный) եզրույթը սովորաբար գործածվում է ակնթարթային գործողություն ցույց տվող բայերի դեպքում, իսկ դրան հակադրվող *բազմակատար* (iterative/multi-event action, ռուս. многократный) եզրույթը արտահայտում է այդ ակնթարթային գործողության անմիջական և բազմակի կրկնությունը տվյալ կոնկրետ իրադրությունում<sup>31</sup>: Մինչդեռ հայ. *ունեմ – ունենում եմ, գիտեմ – գիտենում եմ, եմ – լինում եմ* տիպի զուգաձևերի *ունեմ, գիտեմ, եմ* եզրերը ցույց են տալիս ոչ թե ակնթարթային գործողություն, այլ ժամանակավոր (ընթացիկ) վիճակ, իսկ *ունենում եմ, գիտենում եմ, լինում եմ*

<sup>27</sup> Իսկ հին հայերենում *անկատար – կատարյալ* կերպային հակադրությունը դրսևորվել է նաև ստորադասական առաջին և երկրորդ ապառնիների պարագայում (տե՛ս **Զ. Աճառյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի. համեմատությամբ 562 լեզուների, հ. IV, Ա գիրք, Եր., 1959, էջ 60-61):

<sup>28</sup> Տե՛ս **Գ. Ջահուկյան**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, էջ 252:

<sup>29</sup> Տե՛ս **B. Comrie**, Aspect, էջ 71-73, **Ö. Dahl**, Tense and Aspect Systems, Oxford, 1985, էջ 79-80, նաև՝ **H. de Swart**, Verbal Aspect. In **R. I. Binnick** (ed.), The Oxford Handbook of Tense and Aspect, Oxford University Press, 2012, էջ 758-760:

<sup>30</sup> Տե՛ս **Գ. Ջահուկյան**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, էջ 253:

<sup>31</sup> Տե՛ս **C. S. Smith**, նշվ. աշխ., էջ 29-30, 24, 246, նաև՝ **J. Forsyth**, A Grammar of Aspect. Usage and Meaning in the Russian Verb, Cambridge University Press, 1970, էջ 26:

եզրերը՝ մշտական (սովորութային) վիճակ<sup>32</sup>: Բիարկե, մշտական, սովորութային վիճակ արտահայտող *ունենում եմ, գիտենում եմ, լինում եմ* ձևերը ենթադրում են տվյալ վիճակային իրադրության կրկնություն, սակայն հատկանշական է, որ այդ կրկնությունը տեղի է ունենում ոչ թե մեկ կոնկրետ դեպքում (on a single occasion), այլ մեկից ավելի, տարբեր դեպքերում (on different occasions), որը կերպային տեսանկյունից համապատասխանում է ոչ թե կրկնական (iterative) կերպին (կրկնական կերպը, որպես կանոն, ենթադրում է տվյալ իրադրության կրկնություն մեկ կոնկրետ դեպքում), այլ հաճախական/սովորութային (frequentative/habitual) կերպին, որը ցույց է տալիս տվյալ իրադրության կրկնությունը մեկից ավելի, տարբեր դեպքերում<sup>33</sup>: Այդ առումով իսկական կրկնական կերպի իմաստը հայերենում բնորոշ է բազմապատկական ածանցներով կազմված բայերին՝ *ջարդոտել, թքոտել, ցատկոտել* և այլն (կրկնական կերպի իմաստը կարող է արտահայտվել նաև բայարմատի կրկնությամբ. հմմտ. *չափել – չափչփել, պաշել – պաշպշել, բրթել – բրթբրթել* և այլն): Նկատենք նաև, որ հայերենում բազմապատկական բայերը համապատասխան ածանցագուրկ տարբերակների հետ *միակատար – բազմակատար* կերպային հակադրություն են արտահայտում միայն ակնթարթային գործողություն ցույց տվող բայերի դեպքում. հմմտ. *Նա թքում է, Նա ցատկում է* (միակատար) – *Նա թքոտում է, Նա ցատկոտում է* (բազմակատար): Մինչդեռ ոչ ակնթարթային գործողություն ցույց տվող բայերի պարագայում դրսևորվում է ընթացքային/սովորութային (progressive/habitual) – կրկնական (iterative) կերպային հակադրություն. հմմտ. մի կողմից՝ *Նա այժմ նամակ է գրում* (ընթացքային կերպ) կամ *Նա ամեն օր նամակ է գրում* (սովորութային կերպ), մյուս կողմից՝ *Նա (այժմ կամ սովորաբար) նամակներ է գրոտում* (կրկնական կերպ) և այլն: Բիարկե ածանցումը և կրկնությունը տվյալ դեպքում բուն քերականական միջոցներ չեն, քանի որ դրանց գործածությունը սահմանափակված է բառայնորեն (lexically). հմմտ. *ջարդոտել, ցատկոտել, բայց կոտրատել*, այսինքն՝ հնարավոր չէ ընդհանուր կանոններ սահմանել, օրինակ, բազմապատկական ածանցներից յուրաքանչյուրի գործածության պայմանների վերաբերյալ: Սակայն նկատենք, որ այլ լեզուներում նույնպես կրկնական կերպը սովորաբար դրսևորվում է բառակազմական ձևաբանության (derivational morphology) մակարդակում. այն արտահայտվում է կա՛մ ածանցմամբ, կա՛մ բայարմատի ամբողջական կամ թերի կրկնությամբ, և կրկնական ձևերի կազմության կանոնները հա-

<sup>32</sup> Ի դեպ, այլ լեզուներում նույնպես հանդիպում են համանման կերպային հակադրություն արտահայտող ձևեր (տե՛ս **B. Comrie**, Aspect, էջ 104-105):

<sup>33</sup> Տիպաբանորեն հայտնի կերպային իմաստների և նրանց դասակարգման հիմնական սկզբունքների վերաբերյալ տե՛ս **D. N. S. Bhat**, նշվ. աշխ., էջ 43-59, նաև **J. Bybee, R. Perkins, W. Pagliuca**, The Evolution of Grammar. Tense, Aspect, and Modality in the Languages of the World, Chicago and London, 1994, էջ 125-127, 137-141, 151-166:

ճախ սահմանափակված են լինում բառայնորեն<sup>34</sup>:

Ինչևէ, անկախ այն բանից, արդյոք հայերենի բազմապատկական ածանցները դիտում ենք որպես կրկնական կերպի քերականական արտահայտության միջոց, թե՞ բացառապես որպես բառակազմական միջոց, ակնհայտ է, որ հայ. *ունեմ – ունենում եմ, գիտեմ – գիտենում եմ, եմ – լինում եմ* տիպի գուգաձևերի իմաստային տարբերությունը պետք է դիտել ոչ թե որպես *միակատար – բազմակատար*, այլ որպես *ժամանակավոր (ընթացիկ) վիճակ – մշտական (սովորությանին) վիճակ* կերպային հակադրություն: Իսկ գլխավոր և երկրորդական վերլուծական ժամանակաձևերի դեպքում *եմ – լինում եմ* գույզը գործողություն ցույց տվող դերբայների հետ արտահայտում է *ոչ հաճախական, ոչ սովորությանին* (non-frequentative, non-habitual) – *հաճախական, սովորությանին* (frequentative, habitual) կերպային հակադրություն. հմմտ. *Նա այսօր նամակ է գրում (է գրել, է գրելու)* – *Նա ամեն օր այս ժամին նամակ գրելիս է լինում (գրած է լինում, գրելու է լինում)*: Բայց այս դեպքում կերպային հակադրությունը ոչ պարտադիր բնույթ է կրում, քանի որ գլխավոր ժամանակաձևերը ըստ համատեքստի կարող են արտահայտել ինչպես *ոչ հաճախական, ոչ սովորությանին*, այնպես էլ *հաճախական, սովորությանին* կերպային իմաստ. հմմտ. *Նա այսօր նամակ է գրում (է գրել, է գրելու)* – *Նա ամեն օր նամակ է գրում (է գրել, է գրելու)*: Ի դեպ, այլ լեզուներից նույնպես հայտնի են համանման դեպքեր, երբ այս կամ այն կերպային հակադրությունը ոչ պարտադիր ձևաբանական արտահայտություն ունի: Օրինակ՝ իտալերենում, իսպաներենում, թուրքերենում, պարսկերենում *ոչ ընթացքային* (non-progressive) և *ընթացքային* (progressive) ձևերի տարբերակումը ոչ պարտադիր բնույթի է, և, ըստ այդմ, ընթացքային կերպի իմաստը կարող է արտահայտվել նաև անկատար կերպի ոչ ընթացքային ձևի միջոցով<sup>35</sup>:

Վերջապես կուզենայինք անդրադառնալ այն հարցին, թե արդյոք *կանգնում եմ, նստում եմ, պառկում եմ, քնում եմ* ձևերը կարող են դիտվել որպես «յուրատեսակ սկսական կերպի արտահայտություններ»: Ինչպես հայտնի է, լեզուներում սկսական կերպի դեպքում հստակ ընդգծվում և առանձնացվում է տվյալ իրադրության (գործողության) սկզբային մասը, և սկսական կերպի բայերի իմաստը սովորաբար մեկնաբանելի է «սկսել ինչ-որ բան անել» կապակցությամբ, օրինակ՝ ռուս. плакать -լաց լինել > заплакать - սկսել լաց լինել, грустить - տխրել, թախծել > загрустить - սկսել տխրել, թախծել, говорить - խոսել > заговорить - սկսել խոսել<sup>36</sup>: Մինչդեռ հայ. *կանգնում եմ, նստում եմ, պառկում եմ* ձևերի դեպքում թվացյալ սկսական կերպի տպավոր-

<sup>34</sup> Տե՛ս J. Bybee, R. Perkins, W. Pagliuca, նշվ. աշխ., էջ 160-164, 166-175:

<sup>35</sup> Տե՛ս B. Comrie, Aspect, էջ 32-33, նաև՝ Մ. Ավետյան, նշվ. աշխ., էջ 39-40:

<sup>36</sup> Տե՛ս «Русская грамматика», т. I, М., 1980, էջ 596-597, նաև՝ J. Forsyth, նշվ. աշխ., էջ 20, իսկ այլ լեզուներից օրինակների համար տե՛ս D. N. S. Bhat, նշվ. աշխ., էջ 50-52, C. S. Smith, նշվ. աշխ., էջ 319-320:

րությունը պարզապես հետևանք է այն բանի, որ այդ բայերի բառային իմաստը ենթադրում է վիճակային անցում: Բայց այդ տրամաբանությամբ սկսական կերպի իմաստ պետք է վերագրվեր նաև *շիկնում էմ, գունատվում էմ, արթնանում էմ* և վիճակային անցում արտահայտող նման այլ բայերի: Իրականում թե՛ *կանգնում էմ, նստում էմ, քնում էմ* և թե՛ *շիկնում էմ, արթնանում էմ* ձևերի դեպքում իրադրության (վիճակային անցում ցույց տվող գործողության) սկզբային մասը հատուկ չի ընդգծվում և առանձնացվում միջին ու վերջնային մասի համեմատությամբ: Այդ առումով ուշագրավ է, որ, օրինակ, անգլերենում *to sit down* - նստել բայից կարող է կազմվել ընթացքային (progressive) կերպի ձև (հմմտ. *He is just sitting down* - Նա հենց հիմա նստում է)<sup>37</sup>, իսկ ընթացքային կերպի դեպքում, ինչպես հայտնի է, նկատի է առնվում տվյալ գործողության միայն միջին մասը: Մյուս կողմից, օրինակ, ռուսերենում, որտեղ սկսական կերպը հատուկ ձևային արտահայտություն ունի<sup>38</sup>, վիճակային անցում ցույց տվող *встать/вставать* - կանգնել, *сесть/сидеться* - նստել, *лечь/ложиться* - պառկել բայերից ոչ մեկին բնորոշ չէ սկսական կերպի ձև, թեև, իհարկե, վիճակային անցում ցույց տվող այլ բայեր ունեն սկսական կերպի ձև (*запустить* - սկսել տխրել, թախծել և այլն)<sup>39</sup>: Ըստ այդմ՝ վիճակային անցում ցույց տալը ինքնին բավարար չէ տվյալ բային սկսական կերպի իմաստ վերագրելու համար. այդպիսի կերպային իմաստ կարող են արտահայտել թե՛ վիճակային անցում, թե՛ զանազան այլ կարգի իրադրություններ ցույց տվող բայերը<sup>40</sup>, եթե, իհարկե, հատուկ ընդգծվում և առանձնացվում է տվյալ իրադրության (գործողության) սկզբային մասը:

Այսպիսով, ամփոփելով վերը կատարված քննության արդյունքները՝ կարող ենք ասել հետևյալը: Հարակատար դերբայը հայերենում դիրք և դրություն արտահայտող չեզոք սեռի միայն սակավաթիվ բայերի դեպքում է կազմում պարզ ստորոգյալ, այսպես կոչված՝ *վիճակային ներկա* և *վիճակային անցյալ անկատար*, իսկ ընդհանուր առմամբ այլ բայերի դեպքում՝ բաղադրյալ ստորոգյալ: Ներկա ժամանակակետի համեմատությամբ կատարվող, կատարված և կատարելի ենթադրյալ կերպային վիճակներ արտահայտող դերբայները իրականում միմյանց հակադրությամբ ոչ թե կերպային, այլ ժամանակային տարբերություն են արտահայտում՝ *ներկա, անցյալ, ապառնի* (հմմտ. *գնում է, գնացել է, գնալու է*), ուստի չեն կարող որպես կերպային հակադրության եզրեր դիտվել: Ժամանակի քերականական կարգի ներսում ոչ իրադրական ժամանակի և իրադրական ժամանակի տարբերակումը որպես (ենթա)կարգեր առարկություն է հարուցում և տարակարծութ-

<sup>37</sup> Տե՛ս **B. Comrie**, Aspect, էջ 20, հմմտ. նաև՝ **C. S. Smith**, նշվ. աշխ., էջ 173-174:

<sup>38</sup> Տե՛ս «Русская грамматика», т. I, էջ 596-597, **J. Forsyth**, նշվ. աշխ., էջ 20:

<sup>39</sup> Տե՛ս «Русская грамматика», т. I, էջ 597:

<sup>40</sup> Տե՛ս նույն տեղը:

յունների տեղիք է տալիս: Մյուս կողմից, նպատակահարմար չէ նաև թյուրըմբռնման տեղիք տվող *ներկա, նախաներկա, ապաներկա և անցյալ, նախանցյալ, ապանցյալ* անվանումների գործածությունը: Ուստի ավելի ճիշտ կլիներ պահպանել այդ ժամանակաձևերի ավանդական անվանումները: Անցյալ անկատարը և անցյալ կատարյալը միմյանց հակադրությամբ արտահայտում են *անկատար կերպ – կատարյալ կերպ* կերպային տարբերություն: *Ունեմ – ունենում եմ, գիտեմ – գիտենում եմ, եմ – լինում եմ* զուգաձևերը ցույց են տալիս *ժամանակավոր (ընթացիկ) վիճակ – մշտական (սովորությանին) վիճակ* կերպային հակադրություն, իսկ գլխավոր և երկրորդական վերլուծական ժամանակաձևերի դեպքում *եմ – լինում եմ* զույգը գործողություն ցույց տվող դերբայների հետ արտահայտում է *ոչ հաճախական, ոչ սովորությանին – հաճախական, սովորությանին* կերպային տարբերություն: Բազմապատկական ածանցներով կազմված բայերը և նրանց ածանցագուրկ տարբերակները (մասամբ էլ՝ կրկնավոր բայերը և նրանց ոչ կրկնավոր տարբերակները), տվյալ բայի բառային իմաստի բնույթով պայմանավորված, միմյանց նկատմամբ արտահայտում են կա՛մ *միակատար – բազմակատար*, կա՛մ *ընթացքային/սովորությանին – կրկնական* կերպային հակադրություն: Ճիշտ չէր լինի հայ. *կանգնում եմ, նստում եմ, պանկում եմ, քնում եմ* ձևերը դիտել որպես սկսական կերպի արտահայտություններ, քանի որ տվյալ իրադրության սկզբային մասը հատուկ չի ընդգծվում և առանձնացվում միջին ու վերջնային մասի համեմատությամբ, իսկ թվացյալ սկսական կերպի տպավորությունը պարզապես հետևանք է այն բանի, որ այդ բայերի բառային իմաստը ենթադրում է վիճակային անցում: Սակայն տիպաբանորեն թե՛ վիճակային անցում, թե՛ զանազան այլ կարգի իրադրություններ ցույց տվող բայերին սկսական կերպի իմաստ կարող է վերագրվել միայն այն դեպքում, եթե հատուկ ընդգծվում և առանձնացվում է տվյալ իրադրության սկզբային մասը:

**Բանալի բառեր** – *պարզ ստորոգյալ, բաղադրյալ ստորոգյալ, ժամանակավոր (ընթացիկ) վիճակ – մշտական (սովորությանին) վիճակ, ընթացքային/սովորությանին – կրկնական կերպային հակադրություն*

**САРГИС АВЕТЯН – Категории времени и вида в армянском языке с точки зрения общей лингвистики и лингвистической типологии.** – В статье показано, что а) конструкции «результативное причастие + спрягаемые формы вспомогательного глагола *եմ*» только при нескольких глаголах со значением физической позиции и состояния являются простыми глагольными сказуемыми (*նստած եմ, կանգնած եմ*), а в остальных случаях – составными причастными (*իտցնած եմ, վիրավորված եմ*), б) семантическое различие между причастием настоящего времени, причастием перфекта и причастием будущего времени не аспектуальное, а временное, чем и обусловлено различие между настоящим временем (*գնում եմ*), перфектом (*գնացել եմ*) и будущим временем (*գնալու եմ*), в) попытка различить «не-

ситуационное время» и «ситуационное время» как (под)категории времени ведёт к недоразумению, г) для армянского языка характерны следующие аспектуальные различия: несовершенный вид (выражаемый имперфектом – *q̄lmut ɛh*) – совершенный вид (выражаемый аористом – *q̄luogh*); временное, нынешнее состояние (*ml̄k̄ut, k̄ut*) – постоянное, привычное состояние (*ml̄k̄l̄mut k̄ut, ɛh̄l̄mut k̄ut*); однократный (*ḡuunlymut k̄ut*) – многократный (*ḡuunlynnut k̄ut*); прогрессивный/привычный (*q̄rmut k̄ut*) – итеративный (*q̄rnnut k̄ut*); нефреквентативный/непривычный (*q̄rmut k̄ut, q̄rl̄k̄ k̄ut, q̄rl̄q̄m k̄ut*) – фреквентативный/привычный (*q̄rl̄q̄hu k̄ut ɛh̄l̄mut, q̄r̄ud k̄ut ɛh̄l̄mut, q̄rl̄q̄m k̄ut ɛh̄l̄mut*), но последнее противопоставление носит факультативный характер.

**Ключевые слова:** *сказуемые глагольные простые, сказуемые составные причастные, временное, нынешнее состояние – постоянное, привычное состояние, прогрессивный/привычный – итеративный, аспектуальные различия*

**SARGIS AVETYAN – *The Categories of Tense and Aspect in Armenian from the Viewpoint of General Linguistics and Linguistic Typology.*** – An attempt is made to show that a) with only a few verbs of posture and location, the constructions “resultative participle + inflected forms of the auxiliary *k̄ut*” represent simple verbal predicates (*l̄uun̄ud k̄ut, ɛh̄l̄q̄l̄ud k̄ut*), otherwise – participial compound predicates (*hn̄q̄l̄ud k̄ut, ɛh̄l̄q̄l̄q̄m̄k̄ud k̄ut*), b) the semantic distinction between present participle, perfect participle, and future participle is one of tense, not of aspect, hence the temporal difference between the present (*q̄lmut k̄ut*), present perfect (*q̄luogh̄l̄ k̄ut*) and future (*q̄luqm̄ k̄ut*), d) an attempt to distinguish between “non-situational time” and “situational time” as (sub-)categories of tense is misleading, e) aspectual distinctions characteristic of Modern Armenian are as follows: imperfective (expressed by imperfect *-q̄lmut ɛh*) vs. perfective (expressed by aorist *-q̄luogh*); contingent, current state (*ml̄k̄ut, k̄ut*) vs. permanent, habitual state (*ml̄k̄l̄mut k̄ut, ɛh̄l̄mut k̄ut*); semelfactive, momentary (*ḡuunlymut k̄ut*) vs. iterative (*ḡuunlynnut k̄ut*); progressive/habitual (*q̄rmut k̄ut*) vs. iterative (*q̄rnnut k̄ut*); non-frequentative/non-habitual (*q̄rmut k̄ut, q̄rl̄k̄ k̄ut, q̄rl̄q̄m k̄ut*) vs. frequentative/habitual (*q̄rl̄q̄hu k̄ut ɛh̄l̄mut, q̄r̄ud k̄ut ɛh̄l̄mut, q̄rl̄q̄m k̄ut ɛh̄l̄mut*), the latter distinction being optional (non- obligatory).

**Key words:** *simple verbal predicate, participial compound predicate, contingent, current state vs. permanent, habitual state, progressive/habitual vs. iterative, aspectual distinctions*